

ՓՈՒՆԸՄԲՈՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ,
ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ
ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԵՎ

ԿՈՐԵԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ
ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԱՐՑԵՐՈՎ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄԻՋԵՎ

ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՓՈՒՆԸՄԲՈՒՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ,
ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԵՎ
ԿՈՐԵԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ
ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ
ԸՆՏԱՆԻՔԻ ՀԱՐՑԵՐՈՎ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄԻՋԵՎ
ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը և Կորեայի Հանրապետության գենդերային հավասարության և ընտանիքի հարցերով նախարարությունը (այսուհետ՝ Կողմեր), ցանկանալով փոխադարձ շահերի հիման վրա ընդլայնել և ամրապնդել երկու երկրների միջև առկա բարեկամական հարաբերություններն ու խթանել երիտասարդության ոլորտում համագործակցությունը, համաձայնեցին հետևյալի մասին.

ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆ 1

1. Սույն Փոխըմբռնման հուշագիրը (այսուհետ՝ ՓՀ) նպատակ ունի տեղեկատվության փոխանակման և Կողմերի կողմից կազմակերպվող միջոցառումներին ու գործողություններին մասնակցելու միջոցով խրախուսել երիտասարդությանն առնչվող հարցերի շուրջ Կողմերի միջև համագործակցությունը:
2. Սույն ՓՀ-ի շրջանակներում ձեռնարկվող բոլոր գործողությունները կիրականացվեն փոխադարձության սկզբունքի հիման վրա՝ հաշվի առնելով Կողմերի բյուջեների և ռեսուրսների առկայությունը:

ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆ 2

Սույն ՓՀ-ի վրա հիմնված համագործակցությունը կիրականացվի հետևյալ միջոցներով՝

ա) երիտասարդների, երիտասարդական կազմակերպությունների ներկայացուցիչների և երիտասարդական քաղաքականության մշակման համար պատասխանատու պաշտոնատար անձանց միջև փորձի փոխանակում,

բ) երկու երկրներում անցկացվող՝ երիտասարդությանն առնչվող հարցերով միջազգային գիտաժողովների ու սեմինարների հրավերների տրամադրում,

գ) երիտասարդությանն առնչվող տպագիր նյութերի, ֆիլմերի, փորձի և այլ տեղեկությունների փոխանակում,

դ) երկու երկրներում կազմակերպվող երիտասարդական ձամբարների, փառատոների և այլ միջոցառումների մասնակցության խրախուսում, և

ե) երիտասարդության ոլորտում իրականացվող ցանկացած այլ գործունեության միջոցով, որի վերաբերյալ Կողմերը կարող են դիվանագիտական ուղիներով համատեղ որոշում կայացնել՝ երկու երկրների համապատասխան օրենքներին և կարգավորումներին համապատասխան:

ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆ 3

Պարբերություն 2 (ա)-ում նշված փոխանակումները կիրականացվեն յուրաքանչյուր տարվա համար առնվազն մինչև նախորդող տարվա հունիսի 30-ը Կողմերի համատեղ որոշմամբ մշակված փոխանակման ծրագրի (ծրագրերի) համաձայն: Յուրաքանչյուր ծրագիր պետք է ներառի պատվիրակների հստակ թիվը, այցելությունների ժամանակացույցը և այլ հարցեր:

ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆ 4

Սույն ՓՀ-ի մեկնաբանման կամ կիրարկման ժամանակ առաջացող ցանկացած տարաձայնություն կլուծվի բարեկամական ճանապարհով՝ Կողմերի միջև բանակցությունների և համագործակցության միջոցով:

ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆ 5

1. Սույն ՓՀ-ն ուժի մեջ է մտնում ստորագրման ամսաթվից և գործում է հինգ (5) տարի ժամկետով: Դրա գործողության ժամկետն այնուհետև կարող է ինքնաբերաբար երկարաձգվել հաջորդող հինգ (5) տարիներն ընդգրկող ժամկետով, եթե Կողմերից որևէ մեկն առնվազն վեց (6) ամիս առաջ մյուս Կողմին նախապես գրավոր չի ծանուցում դրա ժամկետը դադարեցնելու իր մտադրության մասին:

2. Սույն ՓՀ-ի գործողության դադարեցումը չի ազդում սույն ՓՀ-ի շրջանակներում իրականացվող որևէ ընթացիկ ծրագրի կամ գործունեության վրա, եթե այլ բան չի սահմանվում Կողմերի համատեղ որոշմամբ:

3. Սույն ՓՀ-ն կարող է փոփոխվել Կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ:

4. Սույն ՓՀ-ն չի ստեղծում միջազգային իրավունքով պարտադիր իրավական ուժ ունեցող իրավունքներ կամ պարտավորություններ:

Կատարված է Երևանում և Սեուլում 2021 թվականի հուլիսի 20-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, կորեերեն և անգլերեն, ընդ որում՝ բոլոր տեքստերն էլ հավասարազոր են: Մեկնաբանման ընթացքում առաջացած որևէ տարաձայնության դեպքում գերակայում է անգլերեն տեքստը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

ԿՈՐԵԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ
ԵՎ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԱՐՑԵՐՈՎ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



ՉԱՆԳ ՅՈՒՆԳ ԱՅ
ՆԱԽԱՐԱՐ

